04.04.25 - 06.04.25
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Ծաղկաձորի հյուրատուն

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի, կիրառական սոցիոլոգիայի գետահետազոտական լաբորատորիայի և Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախաձեռնությամբ **ս.թ. ապրիլի 4-6-ը ԵՊՀ Ծաղկաձորի հյուրատանը** կանցկացվի «Սոցիալական համերաշխությունը՝ պետականության ամրապնդման հիմք» խորագրով միջազգային գիտաժողովը։

Գիտաժողովի նպատակն է քննարկել սոցիալական համախմբվածության, հավաքական ինքնության և քաղաքացիական ներգրավվածության դերը պետական հաստատությունների ամրապնդման, ազգային միասնության խթանման և կայուն զարգացման ապահովման գործում։ Այն նպատակ ունի համախմբելու գիտնականներին, քաղաքականություն մշակողներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ քննարկելու սոցիալական վստահության բարձրացման, հասարակական բաժանարար գծերի նվազեցման և ընդգրկուն կառավարման խթանման ռազմավարությունները՝ որպես ամուր և համախմբված պետության հիմնասյուներ։

Գիտաժողովին մասնակցելու են դասախոսներ և հետազոտողներ Բեռնի համալսարանից (Շվեյցարիա), Ստավանգերի համալսարանից (Նորվեգիա) և Սանկտ Պետերբուրգի բարձրագույն տնտեսագիտական դպրոցից։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am